ԲԱՆԱՎԵՃ ДИСКУССИИ

ԽՈՐԵՆԱՑՈՒ «ՊԱՏՄՈՒԹՅԱՆ» ՄԵՋ ՀԻՇԱՏԱԿՎՈՂ ՀԱՅԱՍՏԱՆ ԵՐԿԻՐԸ ՈՒՐԱՐՏՈՒՆ Է, ԱՅԼ ՈՉ ԹԵ ՇՈՒԲՐԻԱՆ

Դ. Ն. ՍԱՐԳՍՅԱՆ

Ասորեստանի թագավոր Սինախերիբի (705—681) հայրասպան որդիներին ապաստան տվող երկրի վերաբերյալ Աստվածաշնչի եբրայերեն բնագրում հետևյալ տեղեկությունն է պահպանվել. «Եղավ և ետ գնաց Սանխերիբը (Sanherib)՝ *թագավորը Ասորեստանի, իսկ ապրում էր նա Նինվեում։ Նա աղոթք էր կատարում Նիսրոքի՝ իր աստծու տանը, իսկ Ադրամմելեքը* ('Adrammelek) *և Շարեծերը* (Šare'ṣer)՝ *իր որդիները, սրով սպանեցին նրան և փախուստով փրկվեցին* 'RRṬ *երկիր։ Եվ նրա փոխարեն թագավորեց Ասարխադդոնը* ('Asarḫaddon)՝ *նրա որդին»*[1]*։ Սակայն Աստվածաշնչի հունարեն, իսկ նրանից էլ հայերեն թարգմանության մեջ Սանխերիբ անձնանունը վերարտադրվել է Սենեքերիմ, Ադրամմելեքը՝ Ադրամելեք, Շարեծերը՝ Սարասար, Ասարխադդոնը՝ Ասորդան, իսկ* 'RRT *երկրանունը՝ Արարատ (հուն.* Ἀραράθ, *հայ.* Ararat)*։*

Բ. Բ. Պիոտրովսկին Սինախերիբի հայրասպան որդիներին ապաստան տվող երկրի մասին գրում է. «681 թվականին Սինախերիբը սպանվում է պալատական հեղաշրջման ժամանակ, ընդ որում Ասարխադդոնի գահ բարձրանալուց հետո թագավորին սպանողները փախչում են Շուպրիա։ Աստվածաշնչում, որը պահպանել է այդ տեղեկությունները, հաղորդվում է, որ Սինախերիբի որդիները, որոնք սպանել են իրենց հորը, փախել են Ուրարտու»[2]*. «Արարատ (Ուրարտու)»*[3]*։*

Ի. Մ. Դյակոնովը ընդգծում է, որ Բ. Բ. Պիոտրովսկու առաջ քաշած տեսակետը բխում է հայկական ժողովրդական ավանդության տվյալներից. «Աստվածաշնչում (II գիրք Թագավորների [IV գիրք Թագավորությունների]. XIX, 36—37) ցույց է տրված, որ նրանք (Սինախերիբի որդիները—Դ. Ս.) փախել են Ուրարտու, բայց Բ. Բ. Պիոտրովսկին հայկական ավանդության վերլուծության հիման վրա, որը պահպանվել է Մովսես Խորենացու մոտ (I. 23), եկել է այն եզրակացության, որ նրանք փախել են Սասունի լեռները (Ванское царство, *էջ 127), այսինքն՝ Շուբրիա»*[4]*։ Ի. Մ. Դյակոնովը, զարգացնելով այդ տեսակետը, միաժամանակ առաջ է քաշում նոր կռվաններ. «(Աստվածաշնչի—Դ. Ս.)* 'RRT*-ն կարդա՛ «Ուրարտու»։ Բայց № 67* (АВИИУ—*Դ. Ս.) տեքստից դատելով, Ուրարտուի թագավոր Ռուսա II-ը Ասարխադդոնի հետ բարեկամական հարաբերության մեջ է եղել, դրա համար էլ այդ հաղորդումը թվում է ոչ այնքան արժանահավատ։ Կարող է պատահել,*

---

1 Священныя книги (Ветхаго завета, для употребления евреям). Вена, 1877, т. I, II книга царей (IV книга царств), гл. XIX, с. 648, стк. 36—37 (ср. Исаия, гл. XXXVII, стк. 37—38); И. М. Дьяконов. Ассиро-вавилонские источники по истории Урарту (АВИИУ).—Вестник древней истории (ВДИ). М., 1951, № 3, (№ 62).

2 Б. Б. Пиотровский. Ванское царство. М., 1959, с. 112.

3 Б. Б. Пиотровский. О происхождении армянского народа. Ереван, 1946, с. 20.

4 И. М. Дьяконов. Предыстория армянского народа. Ереван, 1968, с. 172, прим. 264.

Սինախերիբին սպանողները փախել են Շուպրիա, որը հեռավոր Պաղեստինի գրողը մտցրել է Ուրարտու ընդհանուր հասկացության տակ, թեև այդ ժամանակ Շուպրիան փաստորեն չէր ենթարկվում Ուրարտուին»[5]։

Գ. Ա. Մելիքիշվիլին իր հերթին գրում է. «Աստվածաշունչը, օրինակ, հիշատակում է Սինախերիբի (Սանխերիբի) այն որդիների փախուստի մասին Արարատ (այսինքն՝ Ուրարտու) երկիրը, որոնք սպանել էին իրենց հորը։ Ինքը, Ի. Մ. Դյակոնովը, քիչ հավանական է համարում ենթադրել, թե նրանք ապաստանելու իսկական տեղ գտան Ուրարտուում որը այդ ժամանակ բարեկամական հարաբերության մեջ էր գտնվում Ասորեստանի հետ։ Ըստ նրա կարծիքի այստեղ, հավանաբար, խոսքը Շուպրիա փախչելու մասին է (տե՛ս (АВИИУ. № 62, ծան. 6)։ Պարզ է, որ այստեղ «Ուրարտու» (տերմինը) օգտագործվել է ընդհանուր իմաստով այն տերիտորիայի համար, որը տարածված է եղել Ասորեստանից հյուսիս, մասավորապես այն նշանակությամբ, ինչպես ասորեստանցիները օգտագործել են հնագույն ժամանակներում «Նաիրի» տերմինը»[6]։

Ս. Տ. Երեմյանն այդ կապակցությամբ գրում է. «Հայկական պատմական ավանդությունը նշում է, որ Քաղիրթ (այժմ Բաթման-սու) գետի վերին հոսանքում ընկած Սանասունքը կամ Սասունը այն երկիրն է, ուր ապաստան են գտել ասորեստանյան թագավորին սպանողները... Պարսություն կրելով թագավոր դարձած Ասարխադդոնից (680—669) մարդասպանները փախչում են Շուպրիա»[7]։

Ակներև է, որ Աստվածաշունչը հունարեն և նրանից էլ հայերեն թարգմանողները բնագրի 'RRT երկրանունը ընթերցել են Ararat, իսկ վերոհիշյալ ուսումնասիրողները՝ Urartu։

Կումրանյան ձեռագրում (մ. թ. ա. III—II դդ.) Եսայու մարգարեության տեքստի 'RRT երկրանունը հանդես է եկել HWRRT ձևով։ Եվ մի փաստ, ինչպես ընդգծում է Բ. Բ. Պիոտրովսկին[8], որ այստեղ հիրալի գործ ունենք Urartu-ի հետ։

Թվում է, թե հարցը ստացել է իր լուծումը՝ Սինախերիբի հայրասպան որդիները փախել են KUR Urartu կոչվող երկիրը։ Բայց վերոհիշյալ ուսումնասիրողները, ինչպես տեսանք, միաժամանակ այն կարծիքն են հայտնել, թե Սինախերիբի հայրասպան որդիները ապաստան են գտել KUR Subria երկրում, որն այդ ժամանակ չի եղել Ուրարտուի կազմում։ Այդ առթիվ որպես փաստ նոանք վկայակոչում են Խորենացուն հասած հայկական ժողովրդական ավանդության տվյալները, ինչպես նաև Ասորեստանի և Ուրարտուի «բարեկամական փոխհարաբերությունները» Ասարխադդոնի (680—669) և Ռուսա II-ի (685—645) ժամանակներում։

Ինչպես տեսնում ենք, Սինախերիբի հայրասպան որդիներին ապաստան տվող երկրի վերաբերյալ հակասական կարծիք գոյություն ունի աղբյուրների և հետազոտող հեղինակների տեսակետների միջև։ Ուստի անհրաժեշտ է մեկ անգամ ևս անդրադառնալ հիմնական աղբյուրներին՝ սեպագիր արձանագրություններին և հայկական ժողովրդական ավանդություններին։

Ասարխադդոնի և Ռուսա II-ի ժամանակ Ասորեստանի և Ուրարտուի փոխհարաբերությունների մասին տեղեկություններ են պահպանել ասսուրական սեպագիր արձանագրությունները։ Նախ պետք է նշել, որ Ասորեստանի թագավոր Սարգոն II-ի (722/1—705) ժամանակաշրջանի ասսուրական արքայական հետախուզական նամակները[9] տեղեկացնում են, որ VIII դարի վեր-

---

5 АВИИУ, № 62, прим. 6.

6 Г. А. Меликишвили. Наири—Урарту. Тбилиси, 1954, с. 297.

7 Ս. Տ. Երեմյան. Հայ ժողովրդի կազմավորման ավարտը և հայկական առաջին պետական կազմավորումները.—Հայ ժողովրդի պատմություն. հ. I, Երևան, 1971, էջ 427։

8 Б. Б. Пиотровский. Ванское царство, с. 33.

9 R. F. Harper. Assyrian and Babylonian Letters (HABL). London, 1893, № 138; 1894, № № 251, 252; L. Waterman. Royal Correspondence of the Assyrian Empire (WRCAE). I, Ann Arbor, 1930, № № 138, 251, 252; АВИИУ, № 50 (32, 37, 38).

ջին քառորդում, մասնավորապես Ուրարտուի թագավոր Ռուսա I-ի (735—713) ժամանակ Շուբրիա երկիրը եղել է Ուրարտուի կազմում[10]։ Այնուհետև, է. Ֆորրերը՝ այն կարծիքն է հայտնել, որ ըստ Հարպերի № 138, 139, 705 նամակների, Ռուսա I-ի հաջորդ Արգիշթի II-ի (713—685) ժամանակ Շուբրիան անջատ էր Ուրարտուից։ Հավանաբար Շուբրիան Ուրարտուից անջատվել է 714 թ. Ասորեստանից Ուրարտուի կրած պարտությունից հետո[12]։ Ուրարտուից Շուբրիայի անջատված վիճակը պահպանվել է նաև Արգիշթի II-ի հաջորդ Ռուսա II-ի օրոք։ Այդ առթիվ կոնկրետ տեղեկություններ է հայտնում Ասարխադդոնը իր «Նամակ Աշշուր աստծուն» ուղերձի այն հատվածում, որը պատմում է Շուբրիայի վրա Ասարխադդոնի 673 թ. կատարած արշավանքի մասին. «Ուրարտացիները, որ Ուրարտուի միջից փախել էին դեպի Շուբրիա, Ուրսան՝ թագավորը Ուրարտուի, նրանց մասին գոել էր նրան (Շուբրիայի թագավորին—Դ. Ս.) և չէր լսել նա նրա հրամանը՝ նրանց վերադարձնելու մասին հանդուգն (նամակ) էր գրել նրան և ատելությամբ պատասխանել։ Երբ Շուբրիան Աշշուրի՝ իմ տիրոջ, դողությամբ գրավեցի և նրա ժողովրդին գերեվարեցի, որպեսզի երդումը պահպանվեր, մեծ աստվածները ճշմարտություն և արդարություն են պարգևել ինձ, այդ մարդկանց մասին հարցրեցի, հարցաքննեցի, քննեցի և փախստական ոչ մի ուրարտացի չպահեցի, ոչ մեկին չթողեցի, իրենց երկիրը վերադարձրի»[13]։ Այս հատվածում ուշագրավ է ոչ միայն այն, որ 673 թ. արշավանքի նախօրյակին Շուբրիան անջատ էր Ուրարտուից և նրա թագավորը չէր լսում Ուրարտուի թագավորի խնդրանքը՝ ուրարտական փախստականներին վերադարձնելու հարցում ու պատասխանում էր նրանից դժգոհ մարդկանց, այլև այն, որ 673 թ. արշավանքի ժամանակ Ուրարտուի թագավորը Շուբրիայի հարցում ոչ մի միջամտություն ցույց չի տալիս. ավելին, Ասորեստանի թագավորն էլ Շուբրիայից հավաքում և Ուրարտու է վերադարձնում նրա փախստականներին։ Շատ մասնագետներ[14] հենց այս փաստը դաշվի առնելով է, որ Ասորեստանի և Ուրարտուի փոխհարաբերությունները 673 թ. արշավանքի ժամանակ դիտում են որպես բարեկամական։

Սակայն հետաքրքրական է, որ Ասարխադդոնը «Հարցում Շամաշ աստծու մարգարեությանը» քաղաքական բնույթի տեքստերում հայտնում է, որ Ուրարտուի նույն թագավոր Ուրսան նախապատրաստվում է հարձակվել Շուբրիայի վրա՝ նրա քաղաքները կողոպտելու նպատակով. «Շամաշ՝ մեծ տեր, այս օրվանից, նիսաննու ամսվա այս օրվանից մինչև զուզու ամսի առաջին օրը այս տարվա, Ուրսան՝ Ուրարտուի թագավորը, կբռնի՞ արդյոք ճանապարհ Շուբրիայի վրա արշավելու, Շուբրիայի քաղաքների մեջ կռիվ տալու. կողոպուտ ու ավար կկատարի՞ Շուբրիայի քաղաքներից, կգնա՞ արդյոք, կսպանի՞, ում պիտի սպաներ, կկողոպտի՞ ունեցվածքը, կգերեվարի՞ գերիներին կամ ամ-

---

10 Д. Н. Саркисян. Страна Шубрия в урартских надписях.—Древний Восток, 2. Ереван, 1976, с. 122.

11 E. Forrer. Die Provinzeinteilung des Assyrischen Reiches (PAR). Leipzig 1920, S. 87.

12 Д. Н. Саркисян. О причинах похода 673 года Асархаддона на Шубрию. —Древний Восток, 3, Ереван, 1978, с. 168.

13 Th. Bauer. Ein Erstbericht Asarhaddons.—Zeitschrift fur Assyriologie und verwandte Gebiete (ZA). NF, VI, 3/4, Berlin, 1931, col. III. S. 246—248 (Vergl. S. 258). Linie 28—34; R. Borger. Der „Gottesbrief".—Die Inschriften Asarhaddons Königs von Assyrien (IAKA). Graz, 1956, col. III, S. 106, Linie 28—34; D. D. Luckenbill. Ancient Records of Assyria and Babylonia (ARAB). II, Chicago, 1927, § 607; АВИИУ, № 67 (л).

14 Ն. Ադոնց. Հայաստանի պատմություն. Երևան, 1972, էջ 138։ Г. А. Меликишвили. Наири—Урарту, с. 314; И. М. Дьяконов. Предыстория армянского народа, с. 172; Н. В. Арутюнян. Биайнили. Ереван, 1960, с. 326. Ս. Տ. Երեմյան. Հայ ժողովրդի կազմավորման ավարտը և հայկական առաջին պետական կազմավորումները, էջ 428։

բոցներից կխլի՞ ունեցվածքը»[15]։ *Եթե Ի. Ա. Կնուդզոնը այս հատվածի դեպքերը վերագրում է Շուբրիայի վրա Ասարխադդոնի կատարած 673 թ. արշավանքից անմիջապես առաջ ընկած ժամանակաշրջանին, երբ «թիկունքի թշնամիները գրավում են Շուբրիան, իսկ Ասարխադդոնը վերանվաճում է այն»*[16], *ապա Գ. Ա. Մելիքիշվիլին*[17] *և Ն. Վ. Հարությունյանը*[18], *ընդհակառակը, Շամաշին ուղղված հարցման դեպքերը վերագրում են 673 թ. արշավանքից հետո ընկած ժամանակաշրջանին (Գ. Ա. Մելիքիշվիլին թվագրում է 673—672 թթ., իսկ Ն. Վ. Հարությունյանը՝ 672 թ.)։*

Այն կարծիքը, թե հարցումը վերաբերում է 673 թ. նախորդող ժամանակին, միանգամայն հավանական է։ Սակայն, հակառակ Կնուդտզոնի եզրակացության, ակնհայտ է, որ Ռուսան չի իրականացրել Շուբրիան նվաճելու իր մտադրությունը։ Իսկ որ նա այդպիսի մտադրություն կարող էր ունենալ՝ միանգամայն բնական է։ Նրա դրդապատճառներն այս դեպքում նույնն էին, ինչ և Ասարխադդոնինը, այն է՝ նվաճել Շուբրիան, պատժել նրա անհնազանդ թագավորին և վերադարձնել փախստականներին։ Սակայն նա ինչ-ինչ պատճառներով հետաձգել է իր մտադրությունը, մինչև որ Ասարխադդոնը, գուցե և տեղեկանալով դրան, ինքն է նախահարձակ եղել և նվաճել Շուբրիան 673 թ.։

Նույնքան հավանական է նաև մյուս կարծիքը, թե «Հարցում Շամաշ աստծու մարգարեությանը» տեքստաշարի վերոհիշյալ հատվածի դեպքերը վերաբերում են 673 թ. արշավանքից անմիջապես հետո ընկած ժամանակաշրջանին, մանավանդ որ, ինչպես կտեսնենք հետագայում, Ուրարտուի նույն թագավոր Ռուսա II-ի զորահրամանատարը Ասարխադդոնին հաջորդող Աշշուրբանապալի (668—663) օրոք հարձակվում է Շուբրիայի վրա։ Թե՛ մեկ, թե՛ մյուս կարծիքը ցույց են տալիս, որ Ուրարտուն տրամադրված է եղել նվաճել Շուբրիան՝ լինի 673 թ. արշավանքից առաջ, թե նրանից հետո։

Որպեսզի ավելի պարզ դառնա, թե իսկապես ո՞ր ժամանակաշրջանին են վերաբերում «Հարցում Շամաշ աստծու մարգարեությանը» տեքստաշարի վերոհիշյալ հատվածի դեպքերը, ամենից առաջ անհրաժեշտ է պարզաբանել այն հարցը, թե ինչո՞ւ Ասարխադդոնի 673 թ. արշավանքի ժամանակ Ուրարտուն չեզոք դիրք է բռնում Շուբրիայի նկատմամբ, երբ ինքը՝ Ուրարտուն, տրամադրված է եղել նվաճել Շուբրիան՝ 673 թ. արշավանքից առաջ, կամ նրանից հետո։ Այս հարցը պարզաբանելու համար որոշակի տվյալներ է հաղորդում Ասարխադդոնի «Հարցում Շամաշ աստծու մարգարեությանը» տեքստաշարի մի այլ հատվածը. «...Ուրսան՝ Ուրարտուի թագավորը, որին անվանում են Յայա, Պա[...] երկրի թագավորը, որին անվանում են [...], խորհե՞լ են արդյոք, մտածե՞լ են արդյոք, լինի իրենց խորհրդատուների խորհրդով, լինի նրա սեփական զինվորական ուժերով, լինի գիմիրրացիների (LUgi-mir-ra-a-a) *հետ, լինի դաշնակիցների* (ki-ṭar-ru) *հետ, որոնք նրանց հետ են. այդ ամսից, որտեղ նրանք գտնվել են, կբռնե՞ն արդյոք ուղի և ճանապարհ՝ մարտ, կռիվ ու ճակատամարտ կատարելու, սպանության, կողոպտի և գերեվարության համար Շուբրիա երկրում՝ լինի Պումու* (URUPu-ú-mu) *քաղաքում, լինի Քուլլամմերի* (URUKul-lam-me-ri) *քաղաքում, լինի Շուբրիայի ուրիշ բերդաքաղաքում. կգնա՞ն արդյոք, կսպանե՞ն արդյոք, ում պիտի սպանեն, կկողոպտե՞ն արդյոք ունեցվածքը, կգերեվարե՞ն արդյոք գերիներին. կամ Շուբրիայի բերդերից դուրս կհանե՞ն ինչ որ կա մեծ ու փոքր ու կվերցնեն իրենց»*[19]։

---

[15] J. A. Knudtzon. Assyrische Gebiete an den Sonnengott. Leipzig. 1893, Band I, № 48, S. 19, Rs. Linie 5—11; Band II, № 48, S. 150, Rs., Linie 5—11.

[16] J. A. Knudtzon. Op. cit., S. 149—153.

[17] Г. А. Меликишвили. Наири—Урарту, с. 314.

[18] Н. В. Арутюнян. Биайнили, с. 326.

[19] J. A. Knudtzon. Op. cit., Band I, № 48, S. 18, Vs. Linie—11; Band II, № 48, S. 149, Vs. Linie 4—11; АВИИУ, № 68(a).

Ի տարբերություն նախորդի, Ասարխադդոնն այս հատվածում խոսում է LUgimirraja «գիմիրրացիների» և ինչ-որ kitarru «դաշնակիցների» մասին, որոնք միացել են Ուրարտուին ու դարձել նրա համախոհները և օգնականները[20]։

Գ. Ա. Մելիքիշվիլին[21] այն կարծիքն է հայտնել, թե Ուրարտուի և կիմերների դաշնակցությունը սկսվել է 672 թ.։ Ուստի կարելի է մասնանշած տրվյալներից ենթադրել, որ 673 թ. արշավանքից անմիջապես հետո, այն է՝ 672 թ. Ուրարտուի, LUgimirraja «գիմիրրացիների» և kitarru «դաշնակիցների» ստեղծած նոր միությունն է ուժ հաղորդել Ուրարտուին՝ խախտելու ուրարտա-ասսուրական հարաբերության համաչափությունը և հարձակման նախապատրաստվելու Շուբրիայի, այսինքն՝ արդեն Ասորեստանի վրա, որից էլ տագնապահար Ասարխադդոնը դիմում է Շամաշի գուշակությանը։

Հիրավի, եթե Ուրարտուն այդպիսի ուժ ունենար 673 թ. արշավանքից առաջ, ապա 673 թ. արշավանքի ժամանակ Շուբրիայի նվաճման հարցում չեղոք դիրք չէր գրավի, որպեսզի այդ արշավանքից անմիջապես հետո, այն է՝ 672 թ., նույն ուժերով նոր միայն փորձեր Շուբրիայի համար պայքարի ելնել Ասորեստանի դեմ։

Ինչևիցե, եթե Ռուսան 673 թ. հետո նման մի մտադրություն ունեցել է, ապա նա Ասարխադդոնի օրոք, այսինքն՝ մինչև 668 թ., այն չի իրականացրել կամ իրականացնելով, անհաջողության է մատնվել։ Գուցե այդ մտադրության ուշացած իրականացումն է ուրարտական զորահրամանատարի (թուրթանի) հարձակումը Շուբրիայի վրա արդեն Աշշուրբանապալի օրոք։ Իրադրություն, որին, ինչպես ասվեց վերևում, կծանոթանանք քիչ հետո։

Վերոհիշյալ այս երկու ենթադրություններից, այսուհանդերձ, ավելի հավանական է թվում երկրորդը, այն է՝ որ Ուրարտուն 673 թ. արշավանքից հետո է ծրագրում հարձակվել Շուբրիայի վրա՝ Ասորեստանից այն վերանվաճելու նպատակով։ Փաստերը հաստատում են, որ Ասարխադդոնը Շուբրիայի առթիվ Ուրարտուի նկատմամբ վարել է նուրբ դիվանագիտական քաղաքականություն։ Նա Շուբրիայում ապաստանած ուրարտական փախստականներին վերադարձնում է Ուրարտուին, որպեսզի ինքը կարողանա առանց վերջինիս միջամտության զավթել ամբողջ Շուբրիան։ Ռուսա II-ը իր հերթին ինչ-ինչ պատճառներով անմիջապես չի միջամտում Ասարխադդոնի գործողություններին։ Թերևս Ասորեստանից Սարդուրի II-ի և Ռուսա I-ի ժամանակ Ուրարտուի կրած վերքերը դեռ չէին սպիացել. դրա ցայտուն վկայությունն էր Շուբրիայի անջատվելը Ուրարտուից 714 թ. պատերազմի հետևանքով։ Այս հանգամանքը կաշկանդում էին Ուրարտուին՝ մենակ դուրս գալու հզոր թշնամու դեմ։ Սակայն Շուբրիայի կորուստն իր հերթին թանկ էր նստում Ուրարտուին, որովհետև Շուբրիան ոչ միայն բարիքի աղբյուր էր, այլև ստրատեգիական խոշոր պատվար, որտեղ ամրանալով Ասորեստանը անմիջականորեն մոտենում էր Ուրարտուի հարավային սահմանին։ Ուրարտուի համար հրատապ պահանջ էր՝ գոնե վերականգնել Շուբրիայի նախկին վիճակը։ Հանուն այս նպատակի Ռուսա II-ը որոնում և գտնում է իրեն օգնող ուժեր. դրանք էին LUgimirraja «գիմիրրացիները» և kitarru «դաշնակիցները»։

Այս ամենը ստիպում է մտածել, որ Ասորեստանի և Ուրարտուի փոխհարաբերությունները Ասարխադդոնի կառավարության ժամանակաշրջանում հազիվ թե հնարավոր լինի բնութագրել որպես «բարեկամական» կամ «չեղոք»։ Դրությունը եղել է բարդ։ Կողմերից յուրաքանչյուրը լարվածությամբ է հետևել մյուսի քաղաքականության նրբին հարցերին, ամենափոքրագույն հնարավորությունը փնտրել է շարունակելու սահմանամերձ գոտում ազդեցության և իշխանության համար վաղուց սկսված պայքարը։

---

20 Д. Н. Саркисян. Страна Шубрна (Автореферат диссертации на соискание ученой степени кандидата исторических наук, Ереван, 1978), с. 17.

21 Г. А. Меликишвили. Наири—Урарту, с. 314.

Ասարխադդոնից հետո Ուրարտուում դեռևս շարունակում է թագավորել Ռուսա II-ը, որը ձգտում է իրագործել Շուբրիայի կապակցությամբ իր վաղեմի մտադրությունները։ Շուբրիայի վրա այն արշավանքը, որ նա պատրաստել էր դեռևս Ասարխադդոնի ժամանակ և որը մնացել էր անիրագործելի կամ մատնվել էր անհաջողության, տեղի է ունեցել Ասարխադդոնին հաջորդող Աշշուրբանապալի (668—633) ժամանակ։ Այդ մասին Աշշուրբանապալը գրում է. «Անդարիան՝ մարզի կառավարիչը (տարբերակ՝ թուրթան-զորահրամանատարը—Դ. Ս.) Ուրարտուի, որ իջել եկել էր գիշերով գրավելու Ուպումմե երկիրը և Քուլլիմմերի երկիրը՝ Քուլլիմմերի քաղաքում ապրող բնակիչներս՝ ինձ հնազանդ ստրուկները, գիշերվա պահին նրա ջարդը հասցրին, չազատվեց ոչ մեկը։ Գլուխը Անդարիայի կտրեցին և ուղարկեցին ինձ Նինվե»[22]։ Ակներև է, որ ուրարտական զորահրամանատար Անդարիան նվաճելու նպատակով հարձակվել է Շուբրիայի Ուպումմե և Քուլլիմմերի մարզերի վրա, բայց պարտություն է կրել։

Այսպիսով, Շուբրիայի հարցում ասսուրա-ուրարտական փոխհարաբերությունները ինչպես Ասարխադդոնի, այնպես էլ Աշշուրբանապալի ժամանակ, երբ Ուրարտուում թագավորում էր Ռուսա II-ը, կրել են ծայրահեղ հակամարտ, թշնամական բնույթ։

Այժմ քննենք հայկական ժողովրդական ավանդությունների (այստեղ նկատի ունենալով ինչպես Խորենացու Պատմությունը, այնպես էլ հայկական ժողովրդական «Սասնա ծռեր» էպոսը) և սեպագիր արձանագրությունների տվյալները Աստվածաշնչի 'RRT—Ararat-Urartu երկրի և KURSubria երկրի փոխհարաբերությունների վերաբերյալ։

«Սասնա ծռեր» էպոսի մի շարք պատումներում հիշատակվում է Սենեքերիմ թագավորը, որին սպանում են իր որդիները՝ Սանասարն ու Բաղդասարը, ապա փախչում են Վանի թագավորի մոտ և նրա օգնությամբ բնակվում Սասունում[23]։

«Սասնա ծռեր» էպոսում, ուրեմն, Սինախերիբի որդիներին ապաստան տվող երկիրը կոչվում է Սասուն, որը գտնվել է Վանի թագավորության սահմաններում կամ նրանց կից։

Խորենացու Պատմության համապատասխան դրվագում Սինախերիբի հայրասպան որդիներին ապաստան տվող երկրի մասին հետևյալ տեղեկությունն է պահպանվել. «Նաբուգոդոնոսորի թագավորությունից ութսուն, քիչ ավելի կամ պակաս տարի առաջ՝ այս Սենեքերիմը Ասորեստանի թագավոր է եղել, նա որ Երուսաղեմը պաշարեց Հրեաների Եզեկիա առաջնորդի ժամանակ։ Նրա որդիները, Ադրամելեք և Սանասար, նրան սպանելով, փախան եկան մեր մոտ։

Սրանցից մեկին, այն է՝ Սանասարին, մեր քաջ Նախնի Սկայորդին բնակեցնում է նույն Ասորեստանի սահմանների մոտ, մեր աշխարհի արևմտյան-հարավում։ Նրա սերունդն աճելով ու բազմանալով լցրեց Սիմ կոչված լեռը։ Իսկ նրանցից ականավոր ու գլխավոր մարդիկ վերջերը գործերով հավատարմություն ցույց տալով մեր թագավորներին՝ արժանացան այդ կողմերի բդեշխությունն ստանալու։ Իսկ Աղգամողանը բնակվեց նույն կողմի արևելյան-հարավում։ Պատմագիրն ասում է, թե սրանից սերվեցին Արծրունիներն ու Գնունիները[24]։

Այսպիսով, ըստ Խորենացուն հասած ավանդական տվյալների, Սինախերիբի հայրասպան որդիներից Սանասարը բնակություն է հաստատել «մեր աշխարհի արևմտյան-հարավում», «Ասորեստանի սահմանների մոտ», Սիմ

---

22 G. Smith. History of Assurbanipal. London, 1871, part VI, Cylinder „A", col. IV, p. 98—99, line 6—14 (հմմտ. АВИИУ, № 73, որտեղ տեքստը ունի բացթողումներ)։

23 Տե՛ս Սասնա ծռեր. հ. Բ, Երևան, 1951, էջ 485 և հտ., ինչպես և այլուր։

24 Մովսես Խորենացի. Հայոց պատմություն, թարգմ. Ստ. Մալխասյանցի. Երևան, 1961, գիրք I, գլուխ ԻԳ։

լեռան շուրջը, իսկ Ադրամելեքը (տարբերակ՝ Արգամոզան)՝ «նույն կողմի արևելյան-հարավում», հետագայի Արծրունիների ու Գնունիների տոհմական հայրենիքում։ Խորենացու պատմության դրվագում բոլորովին նոր երևույթ է «մեր քաջ նախնի Սկայորդին», որը Սինախերիբի (705—681) սպանության նախօրյակին ու նրանից հետո իշխանություն է ունեցել վերոհիշյալ տերիտորիայում։

Բաբելոնական ժամանակագրությունները հետևյալ տեղեկությունն են պահպանել. «Տեբեթու ամսի 20-ին Սինախերիբին՝ Ասորեստանի թագավորին, խռովության ժամանակ սպանեց իր որդին (aplu-šu)։ Սինախերիբը 25 տարի թագավորեց Ասորեստանի վրա։ Տեբեթու ամսի 20-ից մինչև ադդարու ամսի 2-ը Ասորեստանում տիրեց խռովություն։ Սիմանու ամսի 18-ին նրա որդի Աշշուրախիդդինը (Ասարխադդոն—Դ. Ս.) բարձրացավ ասսուրական դահին»[25]։

Եթե բաբելոնական ժամանակագրության մեջ մատնանշվում է, թե Սինախերիբից դժգոհ էր նրա մի որդին, որը սպանում է իր հորը, ապա Ասարխադդոնը իր մի արձանագրությունում հիշատակում է, որ դրանց թիվը մեկից ավելին էր. «Ստույգ փաստը իմ թագաժառանգության մասին հայտնի դարձավ իմ եղբայրներին (aḫḫeē^MEŠ), և նրանք մոռացան աստվածների պատգամները ու անձնատուր լինելով իրենց դաժան մտադրություններին, մտադրելով չարիք, չար լեղու, ցանելով դրպարտություն, աստվածների կամքին հակառակ նրանք ապստամբվեցին իմ դեմ և մեղսագործ անհավատարմությամբ իմ մեջքի ետև նրանք մտադրեցին ապստամբություն։ Հասկանալով իմ հոր կամքը, հակառակ աստվածների մտադրության նրանք փորձում էին լարել իմ դեմ նրան, ով եղել է ջերմ սրտով իմ նկատմամբ։ Այդ նպատակով նրա հետ նրանք վարվում էին լավ։ Բայց նրա աչքերը հառած էին իմ վրա, որպեսզի պահպանեին իմ արքայական իշխանությունը»[26]։ Նրանք ապստամբեցին և թագավորությանը տիրանալու համար սպանեցին Սինախերիբին[27]։ «Եղբայրներս,— մի ուրիշ արձանագրության մեջ պատմում է Ասարխադդոնը,— նոր լսեցին իմ առշավանքի մոտենալու մասին, լքեցին իրենց հավաքած զինվորական ուժերը՝ փախան անհայտ տեղ»[28]։ Ակներև է, որ այստեղ խոսքը վերաբերում է հայրասպան եղբայրներին, որոնց Ասարխադդոնը հալածում է։ Սակայն թե ինչ անունով երկիր են նրանք փախել, Ասարխադդոնը չի մատնանշում, այլ ասում է «անհայտ տեղ»։

Սինախերիբն ունեցել է հինգ որդի. ավագ որդին՝ Aššur-nadin-šum[29], երկրորդը՝ Arad-Ninlil[30], երրորդը՝ Assur-aḫu-iddin (Ասարխադդոն), չորրորդը՝ Aššur-šum-ušabši[31], հինգերորդը՝ Aššur-ilu-muballisu[32]։

---

[25] E. Schrader. Keilinschriftliche Bibliotek (KB). II, Berlin, 1890, S. 280—282 Babylonische Chronik „B", Linie 34, 38; АВИПУ, № 63.

[26] R. C. Thompson. The prisms of Esarhaddon and of Ashurbanipal. London, 1931, p, 10, line 23—31; A. T. Olmstead. History of Assyria. New York—London, 1923, p, 338; Ն. Ադոնց, նշվ. աշխ., էջ 130։

[27] A. T. Olmstead. Op. cit., p. 338; Ն. Ադոնց, նշվ. աշխ. էջ 130։

[28] ARAB, II, §§ 501—505; АВИИУ, № 62, прим 7.

[29] C. Bezold. Inschriften Sanherib's.—KB, II, S. 98—99, Linie 63; R. C. Thompson. Op. cit., col. III, line 63; Ն. Ադոնց, նշվ. աշխ. էջ 129, ծան. 2։

[30] C. H. W. Johns. Assyrian Deeds and Documents. I, Cambridge, 1898, p. 15 № 20; Ն. Ադոնց, նշվ. աշխ. էջ 129 ծան. 2։

[31] V. Scheil. Une brique de Sennachérib avec mention probable du nom du meurtrier de ce roi.—ZA, XI, Leipzig, 1896, p. 425—427 (comp. ZA, XII, 1897, p. 62 et contin; N. Adontz. Histoire d'Arménie. Paris, 1946, p. 126, ann. 2).

[32] V. Scheil. Pierre avec inscription de Sennachérib, mentionnant un nouveau fils de ce roi.—Recueil de travaux relatifs à la philologie et a l'archéologie égyptiennes et assyriennes. XXVI, Paris, 1904, p. 27—28; Ն. Ադոնց, նշվ. աշխ., էջ 129, ծան. 2։

Հինգ որդիներից Աշշուր-նադին-շումը՝ Սինախերիբի ավագ որդին և գահաժառանգը, սպանվել է դեռևս 694 թ.[33]։ Մնացած չորս որդիներից Սինախերիբն իր գահի ժառանգորդ է նշանակում ոչ թե երկրորդ որդուն՝ Արադ-Նինլիլին, այլ երրորդին՝ Ասարխադդոնին։ Բնական է ենթադրել, որ Սինախերիբի սպանությունը կարող էր կազմակերպել ամենից առաջ երկրորդ որդին՝ Արադ-Նինլիլը, որին Սինախերիբը արհամարհել ու զրկել էր արքայական գահի ժառանգորդի իրավունքից, բայց ըստ երևույթին սրան հաջողվել է իր կողմը գրավել նաև իր մյուս եղբայրներին։

Գիտական գրականության մեջ շատ են քննարկվել մի կողմից Աստվածաշնչում (ինչպես նաև Խորենացու Պատմությունում և «Սասնա ծռեր» էպոսում), մյուս կողմից սեպագիր արձանագրություններում պահպանված տեղեկությունները Սինախերիբի որդիների անունների վերաբերյալ և զանազան փորձեր են արվել համաձայնեցնել կամ բացատրել դրանք[34]։ Ինչևիցե, փաստն այն է, որ Ադրամմելեքի և Շարեծերի նախատիպերն են եղել Արադ-Նինլիլը, Աշշուր-շում-ուշաբշին, գուցե նաև Աշշուր-իլու-մուբալլիսուն։

673 թ. Շուբրիայի վրա Ասարխադդոնի կատարած արշավանքի արդյունքները[35] ցույց են տալիս, որ Ասորեստանի թագավորը նվաճում է ամբողջ Շուբրիան, տապալում Շուբրիայում իշխող խուրրիական դինաստիան, սպանում է երկրի թագավոր ¹Ni-iq-Te-šub-ին, երկիրը բաժանում Ուպպումմու և Քուլլիմմերի ասսուրական երկու վարչական միավորների միջև և նրանց վրա որպես կառավարիչներ նշանակում իր երկու մերձավորներին՝ ¹Marduk-eri-ba-ին (այլ ընթերցում՝ ¹Bi-'-lu) և ¹Bēl-iddina-ին։ Ասարխադդոնին հաջողվում է նաև Շուբրիայից դուրս կորզել ասսուրական բոլոր փախստականներին։ Սակայն Շուբրիայում ապաստանած ասսուրական փախստականների շարքում չեն հիշատակվում Սինախերիբի ապստամբ որդիները, համենայն դեպս, այդ մասին ոչինչ չի ակնարկում ինքը՝ Ասարխադդոնը, Շուբրիան նվաճելու հետ կապված իր «Նամակ Աշշուր աստծուն» ընդարձակ ուղերձի մեջ, մի բան, որ սպասելի էր, եթե դեպքը իրոք տեղի ունեցած լիներ։

Ինչպես ընդգծում է Է. Ֆորրերը[36], ըստ ասսուրական արքայական հետախուզական նամակների տվյալների, 714 թ. ասսուրա-ուրարտական պատերազմից հետո Շուբրիան անկախացել է Ուրարտուից։ Իսկ ըստ Ասարխադդոնի «Նամակ Աշշուր աստծուն» ուղերձի տվյալների, Ուրարտուից Շուբրիայի անկախ վիճակը տևել է մինչև 673 թ., երբ Շուբրիան նվաճվում է Ասարխադդոնի կողմից և մտցվում Ասորեստանի տիրապետության տակ։ Խորենացու Պատմության գրվագի տեղեկություններից էլ իմացանք, որ Սինախերիբի որդիներից Սանասարը (Աստվածաշնչում՝ Շարեծեր) ապաստան է գտել «մեր աշխարհի» «արևմտյան-հարավում», «Սիմ լեռան» շուրջը, որտեղ գտնվել է վաղ հայկական Սանասուն կամ Սասուն գավառը, որը, ըստ «Սասնա ծռեր» էպոսի տվյալների, դարձյալ համարվել է Սինախերիբի ապստամբ որդիների փախուստի վայրը։

Ն. Ադոնցը ընդգծում է Սանասուն կամ Սասուն գավառի տերիտորիալ տարբերությունը Շուբրիայից. «Շուպրիա պետությունը բաղկացած էր երեք գավառներից՝ Ուպպումե=Իլիջայի կաղա, Կուլլիմերի=Խարզանի կաղա և միջանկյալ գավառը՝ Սելիվանի կաղա...։ Ուլլուբան կամ Խուլպի կաղան Շուպրիայի մասը չէր կազմում. նա մտնում էր Ուսուսուանի (=Սանասուն կամ Սասունի կաղա) հետ միասին Ուրարտուի իշխանության տակ, ինչպես մեր օրերում այս երկու կաղաները՝ Խուլպն ու Սասունը, Մշո (Մուշի) սանջակի

---

33 Ն. Ադոնց, նշվ. աշխ., էջ 129։

34 H. Wincler. Šareşer und Assarhaddon. Altorientalische Forschungen. II, Leipzig, 1901, S. 53—59.

35 Նույն տեղում, էջ 27—41· ZA, S. 234—259; IAKA, S. 102—107; ARAB, II §§ 593—612. АВИИУ, № 67.

36 PAR, S. 87.

մեջ են մտնում, մինչդեռ Իլիջան ու Սիլիվանը՝ Դիարբեքիրի սանջակի»[37]։ Այսպիսով, Ն. Ադոնցը ընդգծում է, որ Սասունին համապատասխանել է սեպագիր արձանագրությունների Ուսուսուանի մարզը (KUR Usususani), որը Ուրարտուի կազմում է եղել դեռևս Մենուայի (810—786)[38] ժամանակից և տարբերվել է Շուբրիա երկրից[39]։

Խորենացու Պատմության հաղորդած տեղեկություններից իմացանք նաև, որ Սինախերիբի մյուս որդին՝ Ադրամելեքը ապաստան է գտել «մեր աշխարհի» «արևելյան-հարավում», Արծրունիների ու Գնունիների տոհմական երկրներում։ Ս. Տ. Երեմյանը Արծրունիների ժառանգական հայրենիքի տեղադրության մասին գրում է. «Աղբակ Մեծ գավառ.—Վասպուրականի 17-րդ գավառը, 1655 կմ² տարածությամբ, գրավում է Մեծ Զավ գետի վերին հոսանքը, որը կոչվում էր Աղբակ գետ, այժմ Աղբակ-սու, գավառիս կենտրոնն էր Հաղամակերտ ավանը (այժմ Բաշ-Կալե)։ Նրանից ոչ հեռու գտնվում էր Սուրբ Խաչ կամ Բարդուղիմեոսի վանքը։ Աղբակ Մեծը Արծրունի տոհմի ժառանգական հայրենիքն էր»[40]։

Ս. Գ. Բարխուդարյանը[41] նույնպես Արծրունի տոհմական երկիրը տեղադրում է Աղբակ գետի ակունքների շուրջը և նրա անունը համադրում Վանից արևելք գտնվող Շուշանց-Սղգայ բնակավայրից հայտնաբերված Ուրարտուի թագավոր Մենուայի արձանագրության մեջ հիշատակված Arsuniuini տեղանվան հետ[42]։ Ինչպես ընդգծում է Գ. Ա. Մելիքիշվիլին[43], արձանագրության ընդհանուր իմաստից հասկանալի է, որ այն կրում է կրոնական բնույթ, նրա մեջ խոսք է գնում խալդյան դարպասին զոհ մատուցելու և ապա նրանից կյանք, առողջություն խնդրելու մասին։ Իսկ դա նշանակում է, որ Arsuniuini բնակավայրը կապվում է բուն ուրարտական աշխարհի հետ թե՛ տերիտորիայով (այն գտնվել է Ուրարտուի Տուշպա-Վան թագավորանիստ քաղաքից ոչ հեռու) և թե՛ այնտեղ իշխող ուրարտական խալդի աստծու պաշտամունքով։

Ս. Գ. Բարխուդարյանը մատնանշում է ուրարտական Arsuniuini բնակավայրի և հայկական Արծրունի ցեղի հետևյալ աղերսները. «Արծրունի նախարարական տոհմը առաջացել է Արծունիունի տոհմից, որը Ուրարտուի դարաշրջանում ապրում էր Վանից հարավ, իսկ հետագայում բնակվում էր Աղբակ գավառում... Հավանական է թվում, որ ուրարտական պետության վաղ շրջանում Արծրունի տոհմի զբաղեցրած տերիտորիան գտնվել է թագավորության կենտրոնական մասում, Վանից մի քիչ արևելք, իսկ հետագայում, հնարավոր է Ուրարտուի անկման փուլում, Արծրունիները նահանջել են դեպի հարավ-արևելք և ամրացել Աղբակ ծայրագավառում, որտեղ Արծրունի նախարարական տոհմը հանդես է եկել Հայաստանի պատմության հենց սկզբում»[44]։

---

37 Ն. Ադոնց, նշվ. աշխ., էջ 200—201։

38 Г. А. Меликишвили. Урартские клинообразные надписи (УКН). М., 1960, № 28, стр. 7.

39 Սասունի հետ համեմատելի է նաև KUR Sašnuini մարզը, որը հիշատակվել է KUR Alzi (հմմտ. վաղ հայկական Աղձն գավառը՝ Սասունի լեռնային զանգվածի արևելքում) մարզի հետ. Մենուայի ժամանակից եղել է Ուրարտուի կազմում և տարբերվել է Շուբրիա երկրից (УКН, №№ 372_{25}, 373_{24}): Հավանարար այս KUR Šasnuini-ն KUR Usususani-ի տարբերակն է։

40 Ս. Տ. Երեմյան. Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի. Երևան, 1963, էջ 33։

41 С. Г. Бархударян. Урартское происхождение армянского нахарарского рода Арцруни.—Исследования по истории культуры народов Востока. М., 1960, с. 37—38.

42 УКН, № 97.

43 УКН, № 196.

44 С. Г. Бархударян. Указ. соч., с. 37—38.

Իր դրված տերիտորիայով Արծրունի-Arşuniuini մարզը տարբերվել է Սոբրիայից։ Վերջինիս կազմում նման անունով մարզ կամ բնակավայր երբեք չի հիշատակվել։ Arsuniuini-Արծրունի մարզը Ուրարտուի կազմում հիշատակվել է դեռևս Մենուայի ժամանակից։

Այնուհետև, Խորենացու Պատմության համապատասխան դրվագից հասկանալի է, որ Արծրունիների և Գնունիների սոհմական երկրները գտնվել են իրար կողքի («Ասորեստանի սահմանների մոտ, մեր աշխարհի... արևելյան-հարավում»)։ Ուստի Աղբակ գետի ակունքների և Վանի արանքում պետք է փնտրել Գնունի սոհմական երկիրը։

Սարգոն II-ի ժամանակաշրջանի ասսուրական հետախուզական նամակներից մեկը, որը Ի. Մ. Դյակոնովի[45] կարծիքով վերաբերում է Սարգոն II-ի կողմից 714 թ. Ուրարտուի վրա կատարած արշավանքի նախօրյակին, հետևյալ տեղեկությունն է պահպանել ուրարտական մարզերի մասին. «Ուր[արտուի] 5 մարզային կառավարիչները մուտք գործեցին Ուեսի քաղաք. Սեթինուն, որը [...]թենի մարզի կառավարիչն էր, Կակկադանուն, որը ուքայացիների դիմացի մարզի կառավարիչն էր, Սակուաթան (^{I}Sa-q/ku-a-ta-a), որը Կանիուն (^{KUR}Qa-ni-un) մարզի կառավարիչն էր, Սիպլիան, որը Ալզի մարզի կառավարիչ էր, Տութուն, որը Արմիրալիու մարզի կառավարիչն էր—ահա նրանց անունները։ Նրանք մուտք գործեցին Ուեսի քաղաք «ուղտատիրոջ քաղաքից»։ Այժմ նրանք ոտքի են կանգնեցրել այնտեղի իրենց ուժերը, նրանց զորքը կլինի ու[ժեղ]։ Թագավորը դուրս եկավ Տուրուշ[պ]այից և գնաց Կանիուն քաղաք (^{URU}Qa-ni-un)"[46].

Տեքստում հիշատակված մարզերից ուքայացիների մասը, ըստ Ի. Մ. Դյակոնովի[47], տեղադրվում է Ասորեստանի և Ուրարտուի սահմանների միջև գտնվող լեռներում. ըստ կոնտեքստի, նրա դիմաց, այսինքն՝ Ուրարտուի հարավ-արևելքում է գտնվել Կակկադանուի մարզը. Ալզին համապատասխանում է հայկական Աղձնիքին (Վանա լճից հարավ-արևմուտք). Արմիրալիուն նույնն է, ինչ որ Սալմանասար III-ի հիշատակած Արամալին և Սարգոն II-ի հիշատակած Արմարիլին-Արմարիյալին, որը գտնվել է Տուշպա-Տուրուշպա (Վան) մայրաքաղաքից արևելք։ Ինչ վերաբերում է Կանիուն մարզին, ապա Ի. Մ. Դյակոնովը[48] նշում է, որ նրա տեղն անորոշ է։

Սակայն մի շարք փաստեր մատնանշում են Կանիուն մարզի տեղը։ Նախ՝ վերոհիշյալ տեքստում Կանիուն մարզը հիշատակվում է ուքայացիների մարզից և Կակկադանուի մարզից անմիջապես հետո, այսինքն՝ Ուրարտուի և Ասորեստանի սահմանների միջև գտնվող լեռներում, Ուրարտուի հարավում։ Այնուհետև՝ նույն տեքստում հիշատակվում է, որ Ուրարտուի թագավորը Տուրուշպայից գնացել է Կանիուն, իսկ նրա 5 մարզերի կառավարիչները գտնվել են Ուեսի քաղաքում։ Հավանաբար, թագավորը Տուրուշպա-Տուշպայից գնում է Կանիուն, որպեսզի բացահայտի Ուեսիում գտնվող կառավարիչների գործողությունները։ Այս մասին տեղեկություն է տալիս Սինախերիբի՝ Սարգոն II-ին ուղարկած նամակներից մեկի հետևյալ հատվածը. «Ուղղանան գոել է ինձ հետևյալը՝ ուրարտացին (Ուրարտուի թագավոր Ռուսա I-ը—Դ. Ս.), որը [...], հենց նոր եկավ, [...], նրա զորքերը ջարդվեցին։ Ուասի քաղաքի (Ուեսի քաղաք—Դ. Ս.) մարզի կառավարիչը սպանված է»[49]։ Տուրուշպա-Տուշպա (Վան) մայրաքաղաքը գտնվել է Վանա լճի հարավ-արևելյան ափին, որի շուրջն էլ

---

[45] АВИИУ, № 50 (3, 4).

[46] HABL, № 444, Line, Obv. 4—20, Rev. 1—2; R. H. Pfeiffer. State Letters of Assyria. New Haven, 1935, N: 8, line, Obv. 4—20, Rev. 1—2; WRCAE, № 444, line, Obv. 4—20, Rev. 1—2; АВИИУ, № 50 (4).

[47] АВИИУ, № 50 (26), прим. 2.

[48] АВИИУ, № 50 (4), прим. 2.

[49] HABL, № 1079, line 4—9; АВИИУ, № 50 (5).

պետք է փնտրել Կանիուն մարզը, իհարկե, դեպի Ուեսի քաղաքը ձգվող տերիտորիայում, որտեղ հավաքվել էին մարզի կառավարիչները և դեպի ուր շարժվում էր Ուրարտուի թագավորը։ Հետևաբար, Կանիունը ընկած է եղել Տուրուշպա-Տուշպայի (Վան) և Ուասի-Ուեսիի միջև։ Այնուհետև, քանի որ Ուեսիում (Ուասի) հավաքվող ուրարտական կառավարիչների և թագավորի ուժերի ջարդի մասին հիմնական տեղեկությունը սալիս է Ուրարտուի հարավ-արևելքում, մոտավորապես Ուրմիա լճի հարավ-արևմտյան ափին տարածված՝ Արդինի-Մուծածիր երկրի թագավոր Ուրզանան, կարելի է եզրակացնել, որ ինչպես Ուեսին (Ուասին), այնպես էլ Կանիունը գտնվել են Արդինի-Մուծածիր երկրի և Ուրարտուի միջև, հատկապես Արդինի-Մուծածիր երկրի արևմտյան սահմաններում, այն է՝ Վանա լճից հարավ-արևելք տարածված տերիտորիայում։ Հետևաբար Ուրարտուի կազմի մեջ մտնող Qaniun մարզը կարելի է փնտրել Վանից հարավ-արևելք տարածված Arşuniuini-Արծրունի մարզի կամ Մեծ Աղբակ գավառի շուրջը, որտեղ, ըստ Խորենացու հաղորդած տեղեկությունների, գտնվել է Գնունի մարզը, որն Արծրունի մարզի հետ միասին եղել է Սկայորդու իշխանության տակ։ Ուստի բնականաբար միտք է առաջանում Qaniun և Գնունի մարզի համադրության մասին։ Ավելին, միտք է հղանում նաև Qaniun մարզի կառավարիչ Saqkuata-ի և Խորենացու Պատմությունում հիշատակված «Գնունի» կոչվող մարզի «նախնի» Սկայորդու անունների համադրության[51] վերաբերյալ, քանի որ երկուսն էլ կապվում են միմյանց հետ թե՛ ժամանակի և թե՛ կառավարած երկրի զբաղեցրած տերիտորիայի տեսակետից (երկուսն էլ ապրել են 681 թ. նախօրյակին, երկուսն էլ իշխել են ուրարտական պետության մեջ մտնող այն տերիտորիայում, որ գտնվել է Վանի հարավ-արևելքում՝ Arşuniuini-Արծրունի մարզի կողքին)[52]։ Qaniun մարզը իր զբաղած տերիտորիայով տարբերվել է Շուբրիայից և 714 թ. ասսուրա-ուրարտական պատերազմից դեռևս առաջ հանդես է եկել Ուրարտուի կազմում։

Ամփոփելով մատնանշված բոլոր փաստերը, կարելի է եզրակացնել, որ Ասարխադդոնի և Ռուսա II-ի ժամանակաշրջանում ասսուրա-ուրարտական հարաբերությունները կրել են ոչ թե բարեկամական, այլ հակամարտ, թշնամական բնույթ։ Ուստի բացառված չէր, որ Սինախերիբի հայրասպան որդիները ապաստան գտնեին ոչ թե Շուբրիայում, այլ հենց Ուրարտուում, ինչպես դա ընդգծվել է Աստվածաշնչում։ Այդ են հաստատում նաև «Սասնա ծռեր» հայկական էպոսի և Խորենացու Պատմության տվյալները, որոնց համաձայն Սանասուն-Սասուն (հմմտ. Usuşiani-Šasniini). Սիմ լեռ, Արծրունի (հմմտ. Arsuniuini), Գնունի (հմմտ. Qaniun) մարզերը, ուր ապաստան են գտել հայրասպան որդիները, գտնվել են Շուբրիա երկրի սահմաններից դուրս և մտել են Ուրարտուի կազմի մեջ։

---

50 Г. А. Меликишвили. Наири—Урарту, с. 36.

51 «Սկայորդին» կարող է լինել «Սաքուաթա»-ի ժողովրդական ստուգաբանական ձևը։

52 Սկայորդին մարզի կառավարիչ էր (Խորենացու մոտ՝ նախնի, այլ ոչ թե թագավոր), իսկ Նայրդոն II-ի (722/1—705), Սինախերիբի (705—681) և Ասարխադդոնի (680—669) ժամանակաշրջանում Ուրարտուի թագավորներն են եղել Ռուսա I-ը (735—713), Արգիշթի II-ը (713—685) և Ռուսա II-ը (685—645)։

Հետևաբար, Աստվածաշնչի 'RRT-Ararat երկիրը, որին համապատասխանում է Խորենացու Պատմությունում հիշատակված «մեր աշխարհը», այսինքն՝ Հայաստանը—Արմենիան, իսկապես վերաբերում է կոնկրետ KURUrartu-ին, այլ ոչ թե KURŠubria երկրին։

СТРАНА АРМЕНИЯ «ИСТОРИИ» ХОРЕНАЦИ ЕСТЬ УРАРТУ, А НЕ ШУБРИЯ

Д. Н. САРКИСЯН

Резюме

В статье показывается, что в эпоху царя Ассирии Ассархаддона (680—669) и царя Урарту Русы II (685—645) ассиро-урартские отношения носили не дружественный, а антагонистический, враждебный характер. Поэтому не исключено, что сыновья царя Ассирии Синаххериба (705—681) после убийства отца нашли убежище не в стране Шубрия, как предполагают Б. Б. Пиотровский, И. М. Дьяконов, Г. А. Мелкишвили и С. Т. Еремян, а в стране Урарту, как это засвидетельствовано в Библии. Свидетельство Библии подтверждают данные армянской народной традиции (имеется в виду эпос «Давид Сасунский» и «История Армении» Мовсеса Хоренаци), согласно которой области Санасун-Сасун (ср. Ususuani-Šasnuini), гора Сим, Арцруни (ср. Arşuniuini), Гнуни (ср. Qaniun), где нашли убежище отцеубийцы, находились вне границ страны Шубрия и входили в состав Урарту. Следовательно, страна Библии 'RRT—Ararat, которой соответствует упомянутая в истории Хоренаци „наша страна", т. е. Армения, и где укрылись сыновья Синаххериба, тождественна стране KURUrartu, а не стране KURŠubria.